

Գաւիթ ըռըկաւ, ձեռ էտու զթուր բեշից, խալաւիւրու վիզ տը կտրէր:

— Ի՞նչ փուշտ փուշտ կ'էնիս, իս հալա յերէկը<sup>1)</sup> տղէն իմ, իս փըշտութի՞ն իմ էրի, տիւ ընձը կ'կանչիս «փուշտ»:

Խալաւիւր էսաց. — Խոզիւղ արիւուղ մեռնիմ, իս փոշտ կ'կանչիմ՝ ճամբախ էնին ձիկ<sup>2)</sup>, կեամ, զքի տեսնիմ:

Գաւիթն էր, ուհամ<sup>3)</sup> էկաւ սերտ, կանչից:

Էկաւ, մօտ խասցաւ<sup>4)</sup>. մօտ որ խասաւ, էսաց. — Ա՛յ ջանմ, Գաւիթ, հիւի կ'էնիմ քենէ, մէկ խօսք ըմ տամ քի, տիւ իմ խօսք էնիս:

— Ի՞նչ խօսք տը տաս ընձի, բարի:

Էսաց. — Էդ շիւարնիրու մեղաց տակ մի մըտնը, որ կայ՝ թազայ փեսայ ի, որ կայ՝ մօրէն մէկ ի, որ կայ՝ զինք մընակ ի, նեա տղայ ունի, նեա աղջիկ, մէ կնիկ կայ, թըղի տուն քաղցած, իկի բիրադի զօռով, տփեղով ի բիրի Մսրամեղիք. էնունց մեղաց տակ մի ընկնի: Մսրամեղիք գեոյ էնա զնժտով չագրի տակ քինիր ի, կինս խատ էնոր կուիւ, էն ի քիւ դիւշման:

Ան էլ զձին քշից, կինաց, չագրը տեռու կանդնաւ: Էրկու Երաբ խզմաթքար ին, կանչից, էսաց. — Արաբբիր, Մսրամեղիք խանէք՝ ընը, կուիւ էնինք:

Արաբբիր ըսըցին. — Մինք չինք կէրը. եօթ օր էնու քիւն կայ. իրիք օր կայ՝ քինիր ի, չուրս էլ կայ, վիր<sup>5)</sup> ընը:

Էսաց. — Իս չիմ դագրը, չուր անիկ ուր քէֆով վեր իլը, էսաց, բիրէք մէկ գիւթնը խուփ ընձը խամա:

Էն սհաթին բիրըն:

Ջխուփ էթալ դարբնի քիրէն<sup>6)</sup>, փշից, կարմըրցըցուց, զխուփ վերուց, էթալ վեար Մսրամեղիքի քեամկին. որ էթալ վեար քեամկին, Մսրամեղիք յիւրիւր առից<sup>7)</sup>, էսաց. — Արաբբիր, իմ տեղ լաւ չէք խուրթի<sup>8)</sup>, լուիր զը կ'ուտին:

1) Երէկուայ: 2) Ինձ: 3) Գուլթ: 4) Մօտենալ, մօտ հասնիլ: 5) Վեր կենայ, զարթնի: 6) Գարբնի հնոց: 7) Շարժուեց: 8) Տեղ խուրթիլ—անկողին պատրաստել: